Առաջարկ 101ա

Հզոր ուժի ստեղծման, արդարություն շահելու հիմնական բանաձեվը

Հարյուր տարի շարունակ բոլոր ռասաներին պատկանող սպասարկման, խնամքի եվ հանրային ոլորտների աշխատողները միասին կառուցել են հզոր մի ուժ SEIU-ում: Մեր միության հզորությունը գալիս է մեզ նման միլիոնավոր մարդկանցից՝ միավորված վերափոխելու մեր աշխատանքները, մեր համայնքներն ու երկրները: Մենք միավորված ենք արդար հասարակության մասին մեր տեսլականով, որտեղ բոլոր աշխատողները գնահատված են, եվ բոլոր մարդիկ՝ հարգված, անկախ նրանից, թե որտեղից ենք կամ ինչ գույն մաշկ ունենք, որտեղ բոլոր ընտանիքները եվ համայնքները կարող են բարգավաճել, եվ որտեղ մենք թողնում ենք ավելի արդար եվ անաչառ աշխարհ գալիք սերունդների համար:

SEIU-ում միավորված աշխատավոր մարդկանց համար, արդարությանն ուղղված մեր պայքարը դա մեր անցյալն է, ներկան եվ ապագան: Ներգաղթյալ հավաքարարների կողմից մեր միության հիմնադրումից սկսած մինչև սեռական ոտնձգություններին ընդդիմացող մերօրյա խիզախ լատինաամերիկացի հավաքարարները, 1960-ականներին քաղաքացիական իրավունքների համար քայլարշավին մասնակցող սևամորթ հիվանդանոցային աշխատակիցներից մինչև SEIU-ի անդամները, ովքեր միացան իրենց համայնքներին՝ վերջ տալու Նյու Յորքի «կանգնեցրու և խուզարկիր» երևույթին, բոլոր ռասաներին պատկանող երեխաների խնամքի ոլորտի աշխատողներից, ովքեր տասնամյակներ շարունակ պայքարել են, որ լուսավորեն իրենց էական և գթառատ աշխատանքը, մինչև օդանավակայանի աշխատակիցները, ովքեր աշխատացնում էին խոշոր ավիաընկերություններ՝ մինիմալ աշխատավարձ ապահովելու համար, յուրաքանչյուր ընտանիքի համար մատչելի և որակյալ խնամք պահանջող առողջապահական աշխատողներից մինչև մեր հաջորդ սերնդի առաջնորդներին կրթող և մատչելի բնակարանների ապահովման համար պայքարող ասպիրանտ դասախոսները, պետական ծառայության աշխատողներից, որոնք հարեցին միություններին, չնայած նրանց դեմ ամրագրված օրենքներին, կանանցից՝ պայքարող արդարության, խտրականության և սեռական ոտնձգությունների դեմ մինչև LGBTQIA աշխատողները, ովքեր պահանջում են արժանապատվություն և ազատություն սեռական կողմնորոշման խտրականությունից՝ հիմնվելով գենդերային արտահայտման կամ գենդերային ինքնության վրա, աշխատողներից՝ պայքարող իրենց աշխատանքի վայրում և համայնքներում հաշմանդամության իրավունքի համար մինչև իրար հետ միասին պահանջող տնային խնամքի աշխատողները և հաճախորդները, արագ սննդի աշխատակիցներից, որոնք հրահրում էին շարժումը և շահում մեկ ժամի դիմաց 15 ԱՄՆ դոլար միլիոնավոր աշխատավոր մարդկանց համար:

Մենք հպարտ ենք արդարության համար պայքարելու մեր պատմությամբ, բայց գիտենք, որ արդար հասարակության մասին մեր տեսլականին հասնելու համար մենք պետք է հաղթահարենք չվերահսկվող կորպորատիվ իշխանության եվ համակարգային ռասիզմի հիմնարար մարտահրավերները: Աշխատողների և մեր միությունների վրա տասնամյակներ տևող հարձակումներն ավելի ու ավելի են կենտրոնացրել հարստությունն ու իշխանությունը կորպորացիաների, միլիարդատերերի և ինքնասպասարկվող քաղաքական գործիչների ձեռքում,

որոնք կեղծել են համակարգն ընդդեմ աշխատավոր ընտանիքների: Իսկ ստրկության և գաղութատիրության ժառանգություններն ամենօրյա կյանքի մի մասն են Միացյալ Նահանգներում, Պուերտո Ռիկոյում և Կանադայում: Քվեարկողների վրա գործադրվող ճնշումը, ջերիմենդերինգը և քվեարկության իրավունքների բռնությունն այլ մաշկի գույն ունեցող ընտրողներին թույլ չեն տալիս լիարժեք մասնակցություն ունենալ մեր ժողովրդավարության մեջ և նվազեցնում են աշխատավոր մարդկանց քաղաքական ուժը: Քաղաքական գործիչները ներգաղթյալներից քավության նոխազ են սարքում և օգտագործում են վախը, որ շեղեն մեր ուշադրությունը ձեռնարկությունների զանգվածային հարկային կրճատումներից և մի քանի միլիարդ դոլար արժողությամբ հատկացումներից, մինչդեռ նրանք կրճատում են այն հանրային ծառայությունների ֆինանսավորումը, որոնց կարիքն ունեն մեր համայնքները:
Տեղական համայնքները նույնիսկ ավելի հետ են մնում՝ գտնվելով գաղութային կառավարությունների կողմից նրանց դեմ մղվող դարավոր բռնությունների և ռասիզմի ծանրության ներքո:
ԱՄՆ-ում գիշատիչ առողջապահական ընկերություններն ու ապահովագրական պլանները չեն կարողանում պատշաճ խնամք ապահովել մաշկի այլ գույն ունեցող համայնքներին, և բոլոր ռասաների ընտանիքները ֆինանսական փլուզման ռիսկի տակ են դնում իրենց վերջնագումարն ապահովելու համար:

Այս մարտահրավերները երբեք ավելի ցայտուն և պարզ չեն եղել, քան անցած մի քանի ամիսների ընթացքում, քանզի տեսանք գլոբալ համաճարակ՝ առաջնագծում քիչ վարձատրվող և անպաշտպան հիմնական աշխատողներով, տնտեսական դեպրեսիա՝ աշխատանքից դուրս մնացած և առողջապահական ապահովագրությունը կորցնող տասնյակ միլիոնավոր մարդկանցով, և համաշխարհային ըմբոստություն՝ պաշտպանելու սևամորթների կյանքը ոստիկանության և պետության բռնություններից ու ժխտելու համակարգային ռասիզմը:

Այս ճգնաժամերը վերստին բացահայտեցին այն խորը պառակտումներն ու անհավասարությունները, որոնք վաղուց գոյություն են ունեցել մեր երկրներում: Բայց նրանք նաեվ ցույց են տվել աշխատող մարդկանց կայունությունն ու ուժը, երբ մենք միավորվում ենք:
Մենք բարձր ենք գնահատում համաճարակի ընթացքում մեր մասին հոգ տանող առաջնագծի առողջապահության և այլ կարևորության աշխատողների քաջությունն ու նվիրվածությունը: Մենք բարձր ենք գնահատում ասիա-ամերիկյան խաղաղօվկիանոսյան կղզիների աշխատողների արժանապատվությունը, ովքեր բախվում են ԱՄՆ նախագահի մնասակար հռետորաբանության մեջ առաջ քաշված ռասիստական, այլատյաց հարձակումներին: Մենք բարձր ենք գնահատում սևամորթ բանվորների առաջնորդությունը համաշխարհային, բազմառասիստ շարժում ստեղծելու մեջ, որը պահանջում է վերջ տալ ոստիկանության դաժանությանը: Մենք հարգում ենք այն ներգաղթյալ աշխատողներին, ովքեր համարվել են էական մեր տնտեսության համար՝ սակայն մերժված լիարժեք մասնակցելու մեր ժողովրդավարությանը: Մեզնից միլիոնավորներն ամեն օր գնացել են աշխատանքի՝ պահելու մեր երկրներն անվտանգ, առողջ և կուշտ: Եվ մեզնից միլիոնավորները դուրս են եկել փողոց՝ պահանջելու արդարություն և պատասխանատվություն, պահանջելու անվտանգություն մեր երեխաների համար, տապալելու Համադաշնության ճնշող հուշարձանները և միասին պատկերացնելու առաջ գնալու նոր ուղի:

Այժմ մենք պետք է գործենք արագ եվ համոզիչ՝ դիմագրավելու չվերահսկվող կորպորատիվ իշխանության եվ կառուցվածքային ռասիզմի մահացու հետեվանքներին: Մենք պետք է մարտահրավեր նետենք այն կորպորատիվ իշխանությանը, որը սնում է բազմասերունդ աղքատության շրջափուլը և իջեցնում ստանդարտները SEIU-ի անդամների և բոլոր աշխատողների համար: Եվ մենք պետք է կառավարությունից պահանջենք այնպիսի լուծումներ, որոնք կենտրոնացնում են այլ մաշկի գույն ունեցող մարդկանց համայնքները, վերացնում ռասիստական քաղաքականությունը, և փոխակերպում ներգաղթի մեր կոտրված համակարգը՝ բոլոր մարդկանց ստվերներից դուրս բերելու համար, որ յուրաքանչյուր ընտանիք առողջ և ապահով լինի, ունենա բարգավաճման հնարավորություն, անկախ ռասայից, ներգաղթյալ կարգավիճակից, սեռից, աշխատանքից կամ բնակության վայրից:

Մենք խորապես հավատում ենք այն խորքային վերափոխմանը, որը գալիս է միասին կազմակերպելու, միավորվելու, եվ միասին ուժ ստեղծելու եվ պահելու կարողությամբ՝ մեկս մյուսի եվ մեր միությունների համար: Մենք այդ իշխանությունը կօգտագործենք անարդար համակարգը քանդելու և միլիոնավոր մարդկանց կողմից մոբիլիզացնելու համար: Սկսած արագ սննդի ոլորտի աշխատողներից, ովքեր աշխատավորների նոր սերնդի համար ստեղծեցին գործադուլի ուժը, մինչև ուսուցիչների և դպրոցական աշխատողների համարձակ պահանջները, ովքեր տասնյակ հազարներով գործադուլ էին անում ամբողջ երկրով մեկ, մինչև անձնվեր առողջապահական աշխատողները, ովքեր իրենց կյանքը վտանգի են ենթարկում մեր կյանքերը փրկելու համար և ռիսկի են ենթարկում իրենց աշխատանքը, որպեսզի խոսեն համաճարակի ժամանակ, մինչև այս ճգնաժամի կեսին իրենց աշխատանքը պաշտպանելու համար՝ երբեմն միայնակ՝ գործադուլ անող աշխատավորները, մինչև միլիոնավոր այլ մարդիկ, ովքեր ամբողջ աշխարհում փողոց են դուրս եկել սևամորթների կյանքը պաշտպանելու համար, ցույց տվեցին աշխատավոր մարդկանց հզորությունը, որը քանդում է ստատուս-քվոն:

SEIU-ի հիմնական աշխատողները, «Պայքար 15 դոլարով» շարժումը եվ Միությունը պարտավորվում են առաջ տանել իրենց ուղին հույսով եվ վճռականությամբ եվ ստեղծել արդար, կայուն Ամերիկա, Պուերտո Ռիկո եվ Կանադա որտեղ սևամորթների կյանքը կարևոր է, որտեղ SEIU-ի անդամներն ի վիճակի են բարձրացնել աշխատավարձերը և ավելի շատ օգուտ ստանալ մեր արդյունաբերություններից, որտեղ բոլոր ռասաներին պատկանող աշխատողները կարող են համախմբվել միություններում, ունենալով սեղանի շուրջ նստելու և ընտանիքը կայունացնող աշխատանք ստեղծելու հնարավորություն, և որտեղ յուրաքանչյուր ոք լիարժեք կերպով մասնակցում է մեր ժողովրդավարությանը:

Մենք կոչ ենք անում հաշվի առնել մեր ազգի տնտեսությունն ու ժողովրդավարությունը՝ քանդելու համար դարավոր ռասիզմն ու գաղութատիրությունը, կորպորատիվ շահագործման սերունդները եվ տասնամյակներ շարունակվող հարձակումները միության դեմ: Մենք հրաժարվում ենք վերադառնալ մի բնականոն վիճակի, որը երբեք չի գործել աշխատող մարդկանց համար: Մենք պահանջում ենք խոշոր արդյունաբերության, կորպորացիաների և կառավարության կողմից անհապաղ, լայնամասշտաբ գործողություններ՝ ապահովելու աշխատող մարդկանց առողջությունը, անվտանգությունը և երկարաժամկետ տնտեսական բարեկեցությունը, անկախ նրանից՝ որտեղ ենք աշխատում, անկախ մեր ռասայից կամ ներգաղթյալի մեր կարգավիճակից:

Մենք պետք է վերաշարադրենք կանոնները՝ ստեղծելու միությունների հաջորդ սերունդը, որը կվերափոխի միլիոնավոր աշխատողների կյանքերը և կկառուցի այն իշխանությունը, որն անհրաժեշտ է մեզ՝ բոլորի համար արդարություն ձեռք բերելու համար:

Ճգնաժամի այս պահին մեզ անհրաժեշտ են անհապաղ, վերափոխիչ լուծումներ՝ մեր երկրներն առաջ մղելու համար: Մենք պետք է ընդունենք կյանքի այս եզակի մարտահրավերը, որպեսզի հիմնովին վերափոխենք մեր քաղաքականությունը, տնտեսությունը և հասարակությունը: Մենք պետք է փորձենք կանխել քայքայումը, ներդրումներ կատարենք ստեղծագործ լայնամասշտաբ աշխատողների կազմակերպման և գործունեության բնագավառում, ինչպես նաև համարձակ պահանջներ առաջ քաշենք հզոր տեղական միություններ կառուցելու և, մեր գործընկերների հետ միասին վերաձևակերպելու աշխատավորների ուժի կառուցման, ռասայական և տնտեսական արդարության կանոնները:

Հետեվաբար, մենք կարագացնենք մեր աշխատանքը, միլիոնավոր աշխատողների խմբավորելով գործատուների եվ տարածաշրջանների միություններում՝ իշխանություն ստեղծելու եվ բոլորի համար արդարացի, բազմառասայական ժողովրդավարություն ապահովելու համար: Մենք անհապաղ միջոցներ կձեռնարկենք հաղթելու հիմա եվ հիմք դնելու մեր երկարատեվ պայքարի համար. Մենք պետք է՝

1. **Վարենք հակառասիստական օրակարգ եվ գործունեություն:** Մենք պետք է միջոցներ ձեռնարկենք Ամերիկայի տնտեսության և ժողովրդավարության շրջանակներում կառուցվածքային ռասիզմի մահացու հետևանքները վերացնելու համար: Մենք պետք է համախմբվենք կորպորատիվ ուժին մարտահրավեր նետելու մրցավազքում, որպեսզի մասնավոր սեկտորն օժանդակի մեր համայնքներին և մեր երկրին, այլ ոչ թե արդյունահանի ռեսուրսներ և աշխատանք առանց հաշվետվության: Եվ մենք պետք է կառավարությունից պահանջենք այնպիսի լուծումներ, որոնք ուշադրությունը կենտրոնացնում են մաշկի գույնի սկզբունքով ստեղծված համայնքների վրա և քանդում ռասիստական քաղաքականությունը, որը մեզ բոլորիս խանգարում է, որ հասկանանք, որ յուրաքանչյուր ընտանիք առողջ է և ապահով, անկախ մեր ռասայից, մեր աշխատանքից և մեր բնակչության վայրից: Որպեսզի արդարություն պահանջենք սևամորթ աշխատողների և յուրաքանչյուր ռասայի աշխատողների համար, մենք կշարունակենք համախմբվել և նյութական աջակցություն ցուցաբերել «Սևամորթների Կյանքի Շարժմանը» և «Սևամորթների առաջնորդության տակ գտնվող գործընկեր» կազմակերպություններին:

2. **Շահել միությունների առաջընթացներ բոլորի համար**: Յուրաքանչյուր աշխատող անձ, անկախ իր ռասայից կամ ներգաղթային կարգավիճակից, պետք է հնարավորություն ունենա միանալու արդյունաբերական և տարածաշրջանային միություններին, որ բարելավի իր աշխատավարձը և աշխատանքի պայմանները: Մենք հաջողության կհասնենք երկարաժամկետ խնամքի, մաքրման/ անվտանգության և արագ սննդի ոլորտներում. ոլորտներ, որոնք շատ են տուժել COVID-19 համաճարակից և տնտեսական ճգնաժամից: Մենք կօգտագործենք մեր պետական ուժը և կազմակերպչական լծակը օրենսդրական կամ գործադիր գործունեությամբ ոլորտային հաղթանակ տանելու համար: Մենք պնդելու ենք, որ

յուրաքանչյուր թեկնածու և ընտրված պաշտոնյա ընդունի փոխակերպող օրակարգ, որն անմիջականորեն վերաբերում է ռասային, ներգաղթի, աշխատատեղերի, առողջապահության և կլիմայի ոլորտներին, և հասցնի դրանք ավելի բարձր չափանիշերի՝ հատուկ կանոններ գրելու համար, որոնք պահանջում են, որ ավելի շատ միություններ ապահովեն արդար և ազնիվ տնտեսություն:

3. **Պայքարենք, որ ամեն ոք ազատ, ապահով եվ առանց խոչընդոտների քվեարկելու իրավունք ունենա, որ հաղթենք նոյեմբերին եվ հիմք դնենք իսկական, բազմառասային ժողովրդավարության համար:** Մեր ազգը վերակառուցելու համար մենք պետք է վերահաստատենք կառավարության արդյունավետությունը և վերականգնենք հասարակության վստահությունն այդ կառավարության նկատմամբ, իսկ նոյեմբերին մենք պետք է հաղթենք քվեաթերթիկով: Մենք կիրականացնենք համալիր քարոզարշավներ՝ ապահովելու, որ բոլոր ռասաների ընտրողները, ցանկացած փոստային կոդով, կարողանան ազատ, ապահով և հեշտությամբ քվեարկել փոստով և անձամբ: Մենք կպայքարենք ընտրողների բռնի հեռացման, կեղծիքների, սարսափազդու հաղորդագրությունների և մաշկի այլ գույն ունեցող մարդկանց համայնքներում ընտրատեղամասերի փակման դեմ: Մենք ոգեշնչելու ենք մասնակիցներին և ուղղելու մաշկի տարբեր գույն ունեցող մարդկանց հազվագյուտ ձայները դեպի ռասայական, տնտեսական, առողջապահական, ներգաղթական և կլիմայական արդարությանը: Մենք կընդլայնենք ժողովրդավարությունը՝ հաղթելով բարեփոխումներ ներգաղթի համար և ճանապարհ դեպի քաղաքացիության ձեռքբերում՝ 10 միլիոն առանց փաստաթղթի հաստատված գաղթականների համար: Եվ մենք կփորձենք ազդել 2021 թվականի ընտրատարածքային վերաձևման վրա՝ ռասիստական և կուսակցական ջերիմենդերինգին, որը պլանավորված կերպով իրավազրկում է մաշկի տարբեր գույն ունեցող մարդկանց համայնքներին:

4. **Ընդլայնենք յուրաքանչյուր առաջնորդ անդամի հնարավորությունները եվ համոզվենք, որ բոլոր մասնակիցները կապի մեջ են, քանի որ մեր շարժումը զարգացնելու համար մենք նոր հարթակ ենք ստեղծում:** Մենք կզարգացնենք մեր թվային գործիքները և ստեղծագործական ներուժը՝ մասնակիցներին և աշխատողներին հասնելու և առաջ տանելու համար: Մենք մասնակիցներին գործիքներ կտրամադրենք իրենց գործընկերներին և համայնքներին կազմակերպելու համար, ներդրումներ կկատարենք մեր շարժման համար նոր, առցանց տարածքներ ստեղծելու ուղղությամբ և կշարունակենք աշխատողների ձայները բարձրացնելու նոր միջոցներ հայտնաբերել: Յուրաքանչյուր անդամ թվային հարթակ է ունենալու՝ մասնակցելու համար, իսկ ոչ անդամ մասնակիցները կունենան դրան միանալու թվային միջոց: Հակա-աշխատավորական կազմակերպությունների կողմից անխնա հարձակումների ներքո, մենք նոր աշխատողներ կընդունենք, նաև՝ ոչ-անդամներ, որպեսզի մեր միությունն ուժեղ լինի: Այս ճգնաժամից մենք դուրս կգանք որպես ավելի կայուն և դինամիկ կազմակերպություն՝ պայքարելու արդար հասարակության մեր տեսլականի համար:

Մենք պարտավոր ենք պայքարը մղել այնպես, որ հաղթենք «Միությունները ԲՈԼՈՐԻ համար», եվ որ ամեն աշխատող կարողանա մտնել միություն՝ անկախ նրա աշխատավայրից, նաեվ

կկերտենք բազմառասայական ժողովրդավարություն, որին ամեն ոք կկարողանա մասնակցել՝ անկախ իր ծագումից եվ մաշկի գույնից, կկառուցենք լավ ղեկավարվող, հակառասիստական SEIU, որի շարժիչը կլինեն նոր սերնդի աշխատավոր ղեկավարները՝ միավորված հզոր տեղական միություններում: Այս հիմնական պարտավորություններն ընդունելով, մենք նահանգներում և գավառներում կկառուցենք մի իշխանություն, որը կբերի ազգային մակարդակով իշխանության առկայությանը և կօգնի արդարություն ձեռք բերել բոլորի համար առաջիկա տարիներին՝ ռասայական, տնտեսական, առողջապահական, ներգաղթական և կլիմայական:

Այս պահին, ինչպես միշտ, SEIU անդամները եվ աշխատավորները, որոնք միացել են պայքարին 15 ԱՄՆ դոլարով եվ Միությունը գիտակցում են միության մեջ համախմբվելու ուժը: Մեր միությունների միջոցով մենք շենացնում ենք մեր ընտանիքները և համայնքները, ավելացնում մեր քաղաքական ուժը և ռասայական և տնտեսական արդարության մեր պայքարը կենտրոնացնում այն սխալների ուղղման վրա, որոնք հայտնաբերում ենք մեր աշխատավայրերում, մեր ավելի մեծ համայնքներում և մեր երկրներում: Միավորելով մեր բոլոր պայքարները, մենք ուժեղանում ենք: Մենք կկառուցենք և կպահպանենք տնտեսական և քաղաքական ուժը մեր միություններում, որպեսզի կարողանանք արդարության համար մղվող այս մարտերը վարել և շահել՝ ներկայացնելով հաջորդ հարյուր տարվա ընթացքում արդար հասարակության մեր տեսլականը: **Վստահ ենք՝ երբ միասին ենք պայքարում, հաղթում ենք:**